



ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Աշխարհում էլեկտրաէներգիայի արտադրության մեջ ամենամեծ մասնաբաժինն (շուրջ 63 %) ունեն ջերմային էլեկտրակայանները: Նրանց ներդրումը մեծ է նաև շրջակա միջավայրի աղտոտման գործում: Տարատեսակ վառելիքների այրումից սրացված վնասակար նյութերի արտանետումը մթնոլորտ էկոլոգիական լուրջ խնդիրներ է ծնել: Ջերմաէլեկտրակայաններում օրգանական վառելիքի (ածուխ, նավթ, մագոթ, գազ և այլն) այրումից մթնոլորտ են արտանետվում ածխաթթու գազ, ծծմբի, ազոտի օքսիդներ, զանազան մետաղների օքսիդներ և ֆտորային միացություններ, վառելիքի ոչ լրիվ այրումից առաջացած գազային նյութեր: Դրանք մեծ վնաս են հասցնում կենսոլորտին, ձեռնարկություններին, փայտանյութի օբյեկտներին և բնակչությանը: Վնասակար ազդեցությունը թափանցում է թե՛ մթնոլորտ, թե՛ ջրոլորտ, թե՛ քարոլորտ: Այսպես շարունակվելու դեպքում մեր մոլորակը շատ աղետալի վիճակում կհայտնվի: Փրկության ինչ էլքեր կան: Մարդիկ մտածում են սրտեղծել այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք կմաքրեն և կվնասազերծեն վրանգավոր արտանետումները, խիստ վնասակար թափոնները կհավաքեն և հարուկ փարաներում կպահեն: Այս ուղղություններով պետք է ասել, որ բավական առաջընթաց գրանցվել է, սակայն, վնասակար նյութերի արտանետումներից վերջնական ազատագրման խնդիրը առայժմ մնում է չլուծված: Խնդրի լուծման մեկ այլ ճանապարհ է էներգիայի վերականգնվող աղբյուրների՝ քամու, արևի, երկրաջերմային էներգիաների օգտագործումը: ՀՀ-ը չունի նավթի, գազի ու քարածխի բնական պաշարներ և սրիաված է դրանք ներկրել այլ երկրներից: Էներգիայի այս տեսակների և հարկապես արևի էներգիայի լայնամասշտաբ օգտագործումը կարող է դառնալ ՀՀ էներգետիկ անկախության կայուն երաշխիք, միաժամանակ նկատելի չափով լուծելով շրջակա միջավայրի աղտոտվածության խնդիրը: